

Հայ գրականության մարզային օլիմպիադայի հարցաշարերի
գնահատման չափանիշները

11-րդ դասարան

- 1-ին հարց՝ 1-ին ենթահարց՝ 1 միավոր, 2-րդ՝ 2,5 միավոր, 3-րդ՝ 1,5 միավոր:
2-րդ հարց՝ 1- ին ենթահարց՝ 0,5 միավոր, 2-րդ՝ 0,5, 3-րդ՝ 2 միավոր, 4-րդ՝ 1 միավոր,
5-րդ՝ 1 միավոր
3-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 0,5 միավոր, 2-րդ՝ 0,5 միավոր, 3-րդ՝ 1 միավոր, 4-րդ՝ 1 միավոր,
5-րդ՝ 2 միավոր
4-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 0,5 միավոր, 2-րդ՝ 3 միավոր, 3-րդ՝ 1,5 միավոր:

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի
պատասխաններ

11-րդ դասարան

1. Մեջբերված տողերը պատկանում են հայ հոգեբանական արձակյի հիմնադիրներից, «մեր խոսքի լուրջ վարպետներից և մեր գրականության հարատև փառքերից» մեկի՝ Նար- Դոսի գրչին: Այս տողերը բնութագրում են «Սպանված աղավնին» վիպակի հերոս Ռուբեն Թուսյանին:

Նար-Դոս գրական անվան հեղինակը «Նոր -Դարի» քարտուղար Մելքոն Դանագյոզյանն է(այն ծաղկի անուն է):

«Սպանված աղավնին» վիպակը մի խաբված կնոջ ողբերգական կյանքի պատմություն է՝ հիմնված իրական, հավաստի դեպքերի վրա, որ պատմում է հեղինակը՝ ներկայանալով Միքայել Մարգարյան անունով: Թեման մշտական-այժմեական է, քանի դեռ գոյություն կունենա երկու սեռերի հարաբերության խնդիրը: Մեր գերզարգացած ժամանակների համար գուցե ժամանակվրեպ թվան վիպակում արծարծված հարցերը՝ խաբվածության ցավը, վրեժխնդրությունը, հոգին կեղեքող հուշը, հավատասպանությունը, բայց այս բոլորը միայն երևութական են, իրականում մենք գործ ունենք ծանր մանկություն ունեցած մարդկանց հետ, որոնք աշխարհը ներփակել են իրենց մեջ և ուզում են ապրել իրենց հազիվ կառուցվող աշխարհում, սակայն անցյալը ամենուր հետապնդում է նրանց, նրանց սպանված մանկության ասքը մշտաբար ու հոտնում է նրանց՝ Սառային և Գարեգինին: Այլ է Թուսյանը. հարուստ վաճառականի՝ յուրօրինակ մտածողությամբ երիտասարդը սկզբում (իր իսկ խոստովանությամբ) բոլորովին մտադիր չի եղել խաբել սիրած աղջկան, բայց ժամանակն ու տարածությունը, կյանքի հորձանուտը, շվայտ կյանքը, անպատասխանատվության զգացումը, աններելի ցինիզմը փոխում են նրանց հարաբերությունների ընթացքը... Մնացալը՝ աշակերտի ինքնուրույն մտածողության տիրույթում է:

2. Նորավեպի իշխան պատվանունը տրվել է հայ արձակյի ամենանշանավոր տաղանդին՝ Գրիգոր Զոհրապին, ով բարձրացրեց հայ փոքր ձևի արձակը կատարելության աստիճանի: Մովորելով աշխարհի մեծերից՝ հատկապես Մոպասանից, նա իր խոսքի անկարելի նրբությամբ ու խոր հոգեբանի իմացությամբ բացահայտեց մարդկային հոգու անվերժանելի

խորքերը: Հենց այս բացառիկ տաղանդի համար էլ նրան մեծարեցին այս հրաշալի պատվանունով:

Ճիշտ ապրելու գաղտնիքը Ձոհրապը բանաձևել է իր հանճարեղ նորավեպերից մեկում՝ «Երջանիկ մահում»: Նորավեպի հերոսուհին ծանր հիվանդ է. նա մերժում է բժշկի բոլոր դեղատոմսերը՝ գերադասելով մեռնել՝ իր թարմությունը, իր գեղեցկությունը անայլայլ պահած», մեռնել սիրած մարդու գրկում՝ վայելելով կյանքի վերջին վայրկյանները: Ուրեմն՝ ճիշտ ապրելը կյանքի վայելքն է, նրա համար հիվանդությունը, ցավը, բուժական միջոցները ոչինչ են վայելքի դիմաց: Նրա կենսափիլիսոփայությունը՝ կյանքից հեռանալ արժանապատիվ, երիտասարդ, թարմությամբ շենշող: Ընդամենը մեկ նախադասությամբ նա բանաձևում է կնոջ գաղտնիքը. «Կինը ծիծաղ մըն է. պետք չէ, որ լացի փոխվի»:

3. Նա մեծ էր հողով, արյունով. Արմատներ ուներ նա հողում,

Իր երգերը գեղջուկ նաիրցու քրտինքով էր նա ողողում,

Հանճարեղ երգերում նրա իր երկրի արևն էր շողում,

Նա մեծ էր հողով, արյունով, արմատներ ուներ նա հողում: Եղիշե Չարենց

Մեր թոռիքը Հովհաննես Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել:

Ավետիք Իսահակյան

Ասույթները նվիրված են ամենայն հայոց բանաստեղծին:

Մնացյալը՝ աշակերտը:

4. Հայ գրականության գունագեղ արձակի ու քնարական պոեզիայի անմրցելի մեծություններից մեկին՝ Ավետիք Իսահակյանին, Վարպետ պատվանունով է մեծարել Հարդագողի ճամփորդը՝ Եղիշե Չարենցը: Նրան անվարան կարելի է կոչել հայրենի եզերքի երգիչ, Շիրակի գավակ, Ալագյազի երգիչ, հայ լեզվի խնկարկու և այլն: Մեծ բանաստեղծը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, բալլադներ, լեգենդներ, առակներ, գրույցներ, պատմվածքներ, բայց նրա շենշող տաղանդը առավել բեղմնավոր է քնարերգության ասպարեզում: Իսահակյանը ժամանակի շնչով ապրող բանաստեղծ էր. Նա գրեթե միշտ արձագանքել է իր ժողովրդի կյանքում տեղի ունեցող բոլոր իրադարձություններին: Այդպիսի մի հրաշալի արձագանք է «Մեր պատմիչներն ու գուսանները» բանաստեղծությունը, որը գրվել է 1939-ին՝ Էպոսի ստեղծման 1000- ամյակի առիթով: Հայ ժողովրդի հերոսավեպը ամբողջ կյանքում եղել է բանաստեղծի ներշնչարանը. գրել է ուսումնասիրություններ, մշակել է 4-րդ ճյուղը՝ «Մասնա Մհեր»: Նա միշտ ներշնչված է եղել Էպոսի «ամենահերոսական և ամենատրեքական հերոսով»՝ Փոքր Մհերով: «Մեր պատմիչները և մեր գուսանները» մի հրաշալի ձոներգ է՝ «մեր վանքերի մութ խուցերում» մագաղաթի վրա մեծագույն տքնանքով մեր պատմությունը գրչագրող պատմիչներին և մեր «մեծագոր դյուցազների» անօրինակ հաղթանակները փառաբանող գուսաններին:

Բանաստեղծության առաջին մասը ներծծված է վշտով ու դառնությամբ, որովհետև մեր վշտահար պատմիչները պատմում են մեր ոսոխների արյունոտ արշավանքների մասին, մեր արյունոտված մատյանների տխուր ճակատագրի մասին, մեր ժողովրդի անլուր տառապանքների մասին, ողբում են Հայաստանի դժխեմ բախտը: Իսկ երկրորդ մասը շնչում է հպարտ հերոսականությամբ, փառահեղ հաղթանակների երգով, որ երգում են մեր խանդավառ գուսանները՝ «սուրբ օջախի շուրջը նստած, առջևները գինի և հաց»: Նրանք տեսնում են մեր հայրենիքի շքեղ ապագան, մեր շողովրդի անընկճելի ոգին և «Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացած Թուր- Կայծակին»: Այս բանաստեղծությունը ոչ միայն գնահատական է ու փառաբանություն, այլև մեր ազգային ոգու բնութագիր, համամարդկային արժեքների, հայրենասիրական ոգու վկայական: Մեծ բանաստեղծը փառաբանում և անսահման երախտագիտություն է հայտնում մեր պատմիչներին, գուսաններին, մեր վիպերգի անաուն ասացողներին, որոնց շնորհիվ մեր ժողովուրդը մեր գրականությունը հպարտ կանգնած են աշխարհի լավագույն գրականությունների կողքին՝ հավասարի իրավունքով: